



Համարը ՀՕ-305
Տիպը Օրենք
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2002.04.01/11(186)
Հոդ. 175

Տեսակը Ինկորպորացիա
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունող մարմինը ՀՀ Ազգային ժողով
Ստորագրող մարմինը ՀՀ Նախագահ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.04.2002

Ընդունման ամսաթիվը 06.02.2002
Ստորագրման ամսաթիվը 07.03.2002
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

- [+ Կապեր այլ փաստաթղթերի հետ](#)
- [+ Փոփոխողներ և ինկորպորացիաներ](#)

ՀՀ ՕՐԵՆՔԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2002 թվականի փետրվարի 6-ին

ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Սույն օրենքի խնդիրները

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ Քրեական դատավարության օրենսգիրք) սահմանված կարգով ձերբակալված անձին արգելանքի և կալանավորված անձին կալանքի տակ պահելու ընդհանուր սկզբունքները, պայմանները և կարգը, ձերբակալված և կալանավորված անձանց իրավունքները, դրանց ապահովման երաշխիքները, նրանց պարտականությունները, ինչպես նաև արգելանքից և կալանքից ազատելու կարգը:

Հոդված 2. Ձերբակալված անձին արգելանքի և կալանավորված անձին կալանքի տակ պահելու ընդհանուր սկզբունքները

Ձերբակալված անձին արգելանքի կամ կալանավորված անձին կալանքի տակ պահելն իրականացվում է օրինականության, ձերբակալված կամ կալանավորված անձանց՝ օրենքի առաջ հավասարության, մարդասիրության, անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելու սկզբունքների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքին և Քրեական դատավարության օրենսգրքին, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Ձերբակալված կամ կալանավորված անձանց նկատմամբ արգելվում է ֆիզիկական բռնություն գործադրել, ինչպես նաև անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող գործողություններ:

Սույն օրենքով նախատեսված՝ ձերբակալված անձանց արգելանքի կամ կալանավորված անձանց կալանքի տակ պահելու կարգն ու պայմանները տարածվում են բոլոր ձերբակալված կամ կալանավորված անձանց վրա՝ անկախ

ագությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

Հոդված 3. Ձերբակալվածներին պահելու վայրերում և կալանավորվածներին պահելու վայրերում անձին պահելու հիմքերը

Ձերբակալվածներին պահելու վայրերում անձին պահելու հիմքը Քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան կազմված ձերբակալման արձանագրությունը կամ ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումն է:

Կալանավորվածներին պահելու վայրերում անձին պահելու հիմքը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան կայացված դատարանի որոշումն է՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու կամ անձին ժամանակավոր կալանավորելու կամ հանձնելու համար կալանավորելու մասին:

Առանց սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված հիմքերի ձերբակալվածներին պահելու վայրերում կամ կալանավորվածներին պահելու վայրերում անձին ընդունելն ու պահելն արգելվում է:

(3-րդ հոդվածը խմբ. 19.03.12 ՀՕ-43-Ն)

Հոդված 4. Ձերբակալվածներին պահելու վայրերը և կալանավորվածներին պահելու վայրերը

Ձերբակալվածներին պահելու վայրերը և կալանավորվածներին պահելու վայրերը գործում են Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմինների կառուցվածքներում:

Մարզպետները ձերբակալվածներին պահելու վայրերի և կալանավորվածներին պահելու վայրերի գործունեության համակարգման լիազորություններ չունեն:

Ձերբակալվածներին պահելու վայրերը և կալանավորվածներին պահելու վայրերը ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

(4-րդ հոդվածը լրաց. 15.11.06 ՀՕ-177-Ն)

Հոդված 5. Ուղղիչ հիմնարկներն արգելանքի կամ կալանքի տակ պահելու նպատակով օգտագործելը

Նոր հանցանք կատարելու մեջ կասկածվող կամ մեղադրվող՝ ուղղիչ հիմնարկներում պատիժը կրող դատապարտյալները կարող են պահվել նույն հիմնարկների հատուկ սարքավորված տեղամասերում՝ այլ դատապարտյալներից մեկուսացված:

Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք, օրենսդրությամբ նախատեսված հիմքերով, բժշկի եզրակացության հիման վրա, հիմնարկի պետի որոշմամբ կարող են տեղափոխվել բուժհաստատություններ՝ սույն օրենքով սահմանված կարգով:

Հոդված 6. Կալանավորվածներին պահելու վայրում պահվող անձին ձերբակալվածներին պահելու վայր տեղափոխելը

Կալանավորվածներին պահելու վայրի տեղակայման տարածքից կալանավորված անձին ամեն օր փոխադրելու անհնարինության դեպքում, քննչական գործողություններ կատարելու և դատական քննությունը կալանավորվածներին պահելու վայրից դուրս կատարելու կապակցությամբ, քննիչի, դատախազի կամ դատարանի որոշմամբ, կալանավորված անձը կարող է տեղափոխվել ձերբակալվածներին պահելու վայր՝ մինչև երեք օր տևողությամբ:

Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված, ինչպես նաև տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով կալանավորված անձին սահմանված ժամկետում կալանավորվածներին պահելու վայր փոխադրելու անհնարինության դեպքերում կալանավորված անձը ձերբակալվածներին պահելու վայրում պահվում է կալանավորվածներին պահելու վայրի համար սահմանված կարգով և պայմաններով:

Հոդված 7. Կալանավորված անձի փոխադրումը

Կալանավորված անձը փոխադրվում է պահակախմբի ուղեկցությամբ, հատուկ փոխադրամիջոցներով: Փոխադրման ընթացքում կալանավորված անձը պետք է հնարավորինս պաշտպանված լինի հասարակական հետաքրքրասիրությունից: Քննության շահերից ելնելով՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կալանավորված անձը փոխադրվում է կալանավորված կամ ձերբակալված այլ անձանցից անջատ:

Հոդված 8. Արգելանքի և կալանքի տակ պահելու ժամկետները

Արգելանքի և կալանքի տակ պահելու ժամկետները սահմանվում են Քրեական դատավարության օրենսգրքով:

Հոդված 9. Ձերբակալվածներին պահելու վայրերի և կալանավորվածներին պահելու վայրերի կանոնակարգերը

Ձերբակալվածներին պահելու վայրերում և կալանավորվածներին պահելու վայրերում սահմանված կանոնակարգերն ապահովում են ձերբակալված և կալանավորված անձանց մեկուսացումը, նրանց իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների պատշաճ կատարումը, ինչպես նաև Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված խնդիրների իրագործումը:

Կանոնակարգերի կատարումն ապահովում են ձերբակալվածներին պահելու վայրերի և կալանավորվածներին պահելու վայրերի ծառայողները, ովքեր պատասխանատվություն են կրում իրենց ծառայողական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Հոդված 10. Ձերբակալվածներին պահելու վայրերի և կալանավորվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգերը

Ձերբակալվածներին պահելու վայրերում և կալանավորվածներին պահելու վայրերում կանոնակարգերի կատարումն ապահովելու նպատակով սահմանվում են ներքին կանոնակարգեր, որոնք կարգավորում են ձերբակալված և կալանավորված անձանց ընդունելու կարգը, նրանց վարքագծի կանոնները, այն առարկաների և իրերի ցանկը, որոնք ձերբակալված և կալանավորված անձինք չեն կարող ունենալ իրենց մոտ, արգելված առարկաներն առգրավելու, ստուգումներ կատարելու, տեսակցությունների, նամակագրության, ծանրոցները, հանձնուքները և փաթեթները նրանց հանձնելու կարգը, օրվա կարգացուցակը և սույն օրենքից բխող այլ հարաբերություններ:

Ձերբակալվածներին պահելու վայրերի և կալանավորվածներին պահելու վայրերի վարչակազմերը ձերբակալված կամ կալանավորված անձին պարտադիր տեղեկացնում են տվյալ հիմնարկի ներքին կանոնակարգին: Ձերբակալված կամ կալանավորված անձինք կարող են իրենց ցանկությամբ լրացուցիչ տեղեկություններ ստանալ ներքին կանոնակարգի վերաբերյալ:

Ներքին կանոնակարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(10-րդ հոդվածը փոփ. 08.07.05 ՀՕ-162-Ն)

Հոդված 11. Կանոնակարգը ձերբակալվածներին պահելու վայրում և կալանավորվածներին պահելու վայրում արտակարգ իրավիճակի դեպքում

(վերնագիրը խմբ. 08.07.05 ՀՕ-162-Ն)

Տարերային աղետների, ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի տեղակայման շրջանում արտակարգ իրավիճակի, ռազմական դրության, զանգվածային անկարգության, ինչպես նաև ձերբակալված կամ կալանավորված անձանց զանգվածային անհնազանդության, ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վրա հարձակման իրական վտանգի դեպքերում ձերբակալվածներին պահելու վայրում կամ կալանավորվածներին պահելու վայրում կարող է հայտարարվել արտակարգ իրավիճակ:

Արտակարգ իրավիճակ հայտարարում և դադարեցնում է լիազորված մարմնի ղեկավարը մինչև երեսուն օր ժամկետով: Բացառիկ դեպքերում ժամկետը կարող է երկարաձգվել ևս մինչև երեսուն օրով, իսկ հակահամաճարակային նպատակներով՝ մինչև դրա անհրաժեշտության վերանայլը:

Արտակարգ իրավիճակ հայտարարելու դեպքում կարող է կասեցվել ձերբակալված կամ կալանավորված անձանց՝ սույն օրենքով սահմանված մի շարք իրավունքների իրականացումը՝ պահպանության և հսկողության ուժեղացված միջոցառումների սահմանման, ծանրոցի և հանձնուքի, փաթեթի, դրամական փոխանցումների ընդունման, տեսակցությունների սահմանափակման, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված այլ միջոցառումների ձեռնարկման ձևով: Ձերբակալվածներին պահելու վայրի և կալանավորվածներին պահելու վայրի ներքին կանոնակարգը արտակարգ իրավիճակ հայտարարելու դեպքում սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ձերբակալված կամ կալանավորված անձանց, ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի և այլ անձանց կյանքին և առողջությանն սպառնացող անմիջական վտանգ ծագելու դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի պետը կարող է իրավիճակին համապատասխան միջոցներ կիրառել սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված միջոցառումների սահմաններում՝ անհապաղ տեղեկացնելով պետական լիազորված մարմնի ղեկավարին:

Արտակարգ իրավիճակների կանոնակարգ սահմանելու դեպքում ձեռքարկվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմն այդ մասին անհապաղ տեղեկացնում է ձեռքարկված կամ կալանավորված անձանց:

(11-րդ հոդվածը խմբ. 08.07.05 ՀՕ-162-Ն)

Գ Լ ՈՒ Խ 2.

ՁԵՐԲԱԿԱՎԱԼ ՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 12. Ձեռքարկված և կալանավորված անձանց իրավական վիճակը

Ձեռքարկված կամ կալանավորված անձն ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար սահմանված իրավունքները, ազատությունները և պարտականությունները՝ սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով նախատեսված սահմանափակումներով:

Արգելանքի կամ կալանքի տակ գտնվելու ընթացքում ձեռքարկված և կալանավորված անձանց իրավունքները, անձնական անվտանգությունը և նրանց նկատմամբ հարկադրանքի միջոցների կիրառման օրինականությունն ապահովվում են օրենքով:

Ձեռքարկված և կալանավորված անձանց իրավունքների և ազատությունների իրականացման երաշխիքները սահմանվում են սույն օրենքով և ներքին կանոնակարգով: Ձեռքարկված և կալանավորված անձինք, իրենց իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս, պարտավոր են պահպանել ձեռքարկված անձանց արգելանքի կամ կալանավորված անձանց կալանքի տակ պահելու կարգն ու պայմանները, ինչպես նաև այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռքարկված կամ կալանավորված օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված իրավունքները, ազատությունները և պարտականությունները, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և օրենքով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 13. Ձեռքարկված և կալանավորված անձանց իրավունքները

Ձեռքարկված կամ կալանավորված անձն իրավունք ունի՝

- 1) մայրենի կամ իրեն հասկանալի այլ լեզվով տեղեկություններ ստանալ իր իրավունքների, ազատությունների և պարտականությունների վերաբերյալ.
- 2) իր նկատմամբ բարեկիրթ վերաբերմունքի.
- 3) իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, ինչպես անձամբ, այնպես էլ փաստաբանի, պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմել ձեռքարկվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին, նրանց վերադաս մարմիններին, դատարանին, դատախազությանը, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական միավորումներին և կուսակցություններին, զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին կամ կազմակերպություններին.
- 4) առողջության պահպանման, այդ թվում՝ ստանալ բավարար սնունդ, անհետաձգելի բժշկական օգնություն, ինչպես նաև զննվել իր ընտրած բժշկի կողմից իր դրամական միջոցների հաշվին.
- 5) սոցիալական ապահովության.
- 6) ստանալ իրավաբանական օգնություն.
- 7) անձնական անվտանգության ապահովման.
- 8) մտքի, խղճի և դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների ազատության.
- 9) հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ.
- 10) հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության և ութժամյա գիշերային քնի իրավունքը, որի ընթացքում արգելվում է նրան ներգրավել դատավարական կամ այլ գործողությունների, բացառությամբ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի.
- 11) կոչվել իր անվամբ կամ ազգանվամբ.
- 12) անձնական ընդունելության խնդրանքով դիմել ձեռքարկվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի պետին, դրանց գործունեության նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին.
- 13) իր մոտ ունենալ քրեական գործին կամ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն առնչվող

փաստաթղթեր և գրառումներ, բացառությամբ այն փաստաթղթերի և գրառումների, որոնք պարունակում են պետական կամ ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք.

14) մասնակցել քաղաքացիաիրավական գործարքների:

Կալանավորված անձը նաև իրավունք ունի՝

1) ստանալ կրթություն, զբաղվել ստեղծագործ աշխատանքով.

2) աշխատել.

3) կալանավորվածներին պահելու վայրի խանութից կամ կրպակից կամ վարչակազմի միջոցով ձեռք բերել սնունդ և առաջին անհրաժեշտության առարկաներ.

4) ստանալ և ուղարկել դրամական փոխանցումներ:

Ձերբակալված կամ կալանավորված անձին վերապահվում են նաև օրենքով սահմանված այլ իրավունքներ:

Օտարերկրյա քաղաքացիություն ունեցող ձերբակալված կամ կալանավորված անձինք իրավունք ունեն կապեր հաստատելու և պահպանելու Հայաստանի Հանրապետությունում իրենց պետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հաստատության հետ: Այն ձերբակալված կամ կալանավորված անձինք, ովքեր Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հաստատություն չունեցող երկրի քաղաքացի են, ինչպես նաև փախստականները կամ քաղաքացիություն չունեցող ձերբակալված կամ կալանավորված անձինք իրավունք ունեն կապեր հաստատելու և պահպանելու այն պետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հաստատության հետ, որը ստանձնել է այդ անձանց շահերի պաշտպանությունը կամ նրանց պաշտպանությամբ զբաղվող ցանկացած ազգային կամ միջազգային մարմնի հետ:

Օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող ձերբակալված կամ կալանավորված անձը «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում ապաստանի խնդրանք ներկայացնելու իրավունք ունի, որը համապատասխան վարչակազմի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ենթակա է փոխանցման միգրացիայի հարցերով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմնին:

(13-րդ հոդվածը լրաց. , խմբ. 08.07.05 ՀՕ-162-Ն, լրաց. 21.12.15 ՀՕ-191-Ն, 19.10.16 ՀՕ-178-Ն, փոփ. 16.12.16 ՀՕ-3-Ն)

Հոդված 14. Ձերբակալված և կալանավորված անձանց պարտականությունները

Ձերբակալված կամ կալանավորված անձը պարտավոր է՝

1) դրսևորել օրինապահ վարքագիծ, պահպանել արգելանքի կամ կալանքի տակ գտնվելու՝ սույն օրենքով, ներքին կանոնակարգով և այլ իրավական ակտերով սահմանված կարգն ու պայմանները.

2) կատարել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի օրինական պահանջները.

3) բարեկիրթ վերաբերմունք դրսևորել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի ծառայողների և այլ անձանց նկատմամբ.

4) չխոչընդոտել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի ծառայողների, ինչպես նաև այդ վայրերում կարգուկանոնին հետևող այլ անձանց կողմից ծառայողական կամ հասարակական պարտականությունները կատարելուն.

5) չկատարել սեփական կամ այլ անձանց առողջությանը կամ կյանքին վտանգ սպառնացող գործողություններ:

Ձերբակալված կամ կալանավորված անձն ունի օրենքով սահմանված այլ պարտականություններ:

Գ Լ ՈՒ Խ 3.

ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 15. Պաշտպանի, մերձավոր ազգականների և այլ անձանց հետ տեսակցելը

Ձերբակալված կամ կալանավորված անձն ունի իր պաշտպանությունը ստանձնելու նպատակով տեսակցության եկած փաստաբանի կամ իր պաշտպանի հետ առանձին, անարգել տեսակցելու իրավունք՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման, անկախ աշխատանքային օրերից կամ ժամերից:

Կալանավորված անձի միջնորդության հիման վրա, քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, նրան թույլատրվում են նաև առանձին, անարգել տեսակցություններ քրեական գործով պաշտպան չհանդիսացող փաստաբանի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման, եթե դա կապված է կալանավորված անձին քրեական գործի քննության հետ չկապված իրավաբանական օգնություն ցույց տալու անհրաժեշտության հետ: Քրեական

վարույթն իրականացնող մարմնի կողմից նշված միջնորդության քննարկումը և լուծումը, ինչպես նաև կալանավորված անձի կողմից դրա կապակցությամբ կայացված որոշման բողոքարկումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Ձերբակալված կամ կալանավորված անձի տեսակցությունը փաստաբանի կամ պաշտպանի հետ տրամադրվում է այն դեպքում, երբ փաստաբանը կամ պաշտպանը ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ և փաստաբանական գործունեության արտոնագիր կամ փաստաբանի վկայական՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին ուղղված համապատասխան հավաստագրի հիման վրա: Մույն մասում նշված հավաստագիրը քրեական վարույթն իրականացնող մարմինը ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին ուղարկում է անհապաղ:

Եթե առկա է ձերբակալված անձի մասնակցությամբ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտություն, ապա պաշտպանությունը ստանձնելու նպատակով տեսակցության եկած փաստաբանի հետ նրա տեսակցության տևողությունը կարող է սահմանափակվել պաշտպանի հետ տեսակցության սահմանափակման համար Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 211-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքով և կարգով:

Եթե ձերբակալված կամ կալանավորված նույն անձի հետ տեսակցության համար ներկայացել է մի քանի փաստաբան կամ պաշտպան, ապա ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի պետի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի պատճառաբանված գրավոր որոշմամբ, ելնելով այդ վայրի անվտանգության և բնականոն աշխատանքի ապահովման անհրաժեշտությունից, ձերբակալված կամ կալանավորված անձի հետ միաժամանակյա տեսակցության հնարավորություն կարող է տրվել ոչ բոլոր փաստաբաններին կամ պաշտպաններին՝ այդ որոշման պատճենը տրամադրելով ձերբակալված կամ կալանավորված անձին, ինչպես նաև տեսակցության եկած փաստաբաններին կամ պաշտպաններին: Այս դեպքում ձերբակալված կամ կալանավորված անձն ինքն է ընտրում այն փաստաբաններին կամ պաշտպաններին, որոնց հետ պետք է տեսակցի:

Ձերբակալված և կալանավորված անձանց տեսակցությունը փաստաբանի կամ պաշտպանի հետ տրամադրվում է այնպիսի պայմաններում, որոնցում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի ծառայողները նրանց կարողանան տեսնել, բայց չկարողանան լսել:

Ձերբակալված կամ կալանավորված անձը, իսկ ձերբակալված կամ կալանավորված անձի համաձայնության դեպքում նաև նրա փաստաբանը կամ պաշտպանն իրավունք ունեն պահանջելու անցկացնել դատաբժշկական հետազոտություն:

Ձերբակալված և կալանավորված անձանց տեսակցությունը օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականների, իսկ կալանավորված անձանց՝ նաև զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, տրամադրվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի պետի որոշմամբ: Ձերբակալված անձանց չի տրամադրվում տեսակցություն զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Քննության շահերից ելնելով՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց տեսակցությունը օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող է արգելվել քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ այդ մասին գրավոր իրազեկելով ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին:

Մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կամ այլ անձանց հետ տեսակցությունն անցկացվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի ծառայողների հսկողությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Այդ անձանց կողմից ձերբակալված կամ կալանավորված անձանց արգելված առարկաներ, քրեական գործի քննությանը խոչընդոտող կամ նոր հանցագործության կատարմանը նպաստող նյութեր, տեղեկություններ փոխանցելը կամ փոխանցելու փորձը կարող է հանգեցնել տեսակցության վաղաժամկետ դադարեցման:

Ձերբակալված անձին մերձավոր ազգականների հետ տրամադրվում է առնվազն մեկ տեսակցություն՝ մինչև մեկ ժամ տևողությամբ:

Կալանավորված անձին մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կամ այլ անձանց հետ ամսվա ընթացքում տրամադրվում է առնվազն երկու տեսակցություն՝ մինչև երեք ժամ տևողությամբ: *(15-րդ հոդվածը լրաց. 08.07.05 ՀՕ-162-Ն, 08.04.08 ՀՕ-16-Ն, փոփ., լրաց. 21.12.15 ՀՕ-191-Ն)*

Հոդված 16. Ձերբակալված և կալանավորված անձանց զբոսանքը

Ձերբակալված և կալանավորված անձանց զբոսանքը կազմակերպվում է ցերեկային ժամերին՝ դրա համար նախատեսված տարածքում:

Ձերբակալված և կալանավորված անձանց զբոսանքի տևողությունը չի կարող պակաս լինել օրական մեկ ժամից:

Հողված 17. Ձերբակալված և կալանավորված անձանց կապն ընտանիքի ու արտաքին աշխարհի հետ

Ձերբակալվածներին պահելու վայրի և կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերը ձերբակալված և կալանավորված անձանց կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ ապահովելու համար ստեղծում են համապատասխան պայմաններ: Այդ նպատակով ստեղծվում են տեսակցությունների սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ, լրատվական միջոցներից օգտվելու հնարավոր պայմաններ:

Քննության շահերից ելնելով՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց հեռախոսային խոսակցությունները կարող են արգելվել քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ այդ մասին գրավոր իրազեկելով ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին:

Կալանավորված անձանց թույլատրվում է իրենց հաշվին նամակագրություն վարել՝ առանց նամակների, հեռագրերի թվի սահմանափակման:

Նամակագրությունն իրականացվում է կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով և, առանց նամակագրության բովանդակությանը ծանոթանալու, ենթակա է արտաքին գնման՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով:

Նամակագրության գրաքննություն կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ: Գրաքննությունը կատարում է քրեական վարույթն իրականացնող մարմինը:

Կալանավորված անձի անունով՝ տեղափոխման պատճառով նրա բացակայությամբ ստացված նամակներն ուղարկվում են նրա գտնվելու նոր վայր:

Կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմն ստեղծում է համապատասխան պայմաններ՝ թերթերից, ամսագրերից և այլ գրականությունից օգտվելու համար: Կալանավորվածներին պահելու վայրի խցերը ապահովվում են ռադիոընդունիչներով, այնտեղ կարող են տեղադրվել հեռուստացույցներ:

Կալանավորված անձանց, բացառությամբ առանձնապես ծանր հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձանց, մերձավոր ազգականի մահվան կամ կյանքին սպառնացող ծանր հիվանդության, կալանավորված անձին կամ նրա ընտանիքին զգալի նյութական վնաս պատճառած տարերային աղետի դեպքում կարող են տրամադրվել կարճաժամկետ մեկնումներ:

Կալանավորված անչափահաս անձին կարճաժամկետ մեկնումներ տրամադրվում են միայն ազգականների կամ այլ անձանց ուղեկցությամբ:

Կարճաժամկետ մեկնումներ կարող են տրամադրվել մինչև յոթ օր տևողությամբ՝ չհաշված մեկնման և վերադարձի համար անհրաժեշտ ժամանակը:

Կարճաժամկետ մեկնումներ տրամադրվում են քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ:

Կարճաժամկետ մեկնում տրամադրելու դիմումը քննարկվում է մեկ օրվա ընթացքում: Կարճաժամկետ մեկնման մեջ գտնվելու ժամանակը հաշվվում է կալանքի տակ պահելու ժամկետի մեջ:

Կարճաժամկետ մեկնման հետ կապված ծախսերը հոգում է կալանավորված անձը:

(17-րդ հոդվածը լրաց. 08.07.05 ՀՕ-162-Ն)

Հողված 18. Ձերբակալված և կալանավորված անձանց առաջարկությունները, դիմումները, բողոքները և դրանք քննարկելու կարգը

Ձերբակալված կամ կալանավորված անձն իր առաջարկությունները, դիմումները և բողոքները կարող է տալ ամեն օր, ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր:

Ձերբակալված կամ կալանավորված անձի առաջարկությունները, դիմումներն ու բողոքները քննարկող մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են քննարկել դրանք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում, իսկ ընդունված որոշումների մասին տեղյակ պահել նրանց:

Ձերբակալվածներին պահելու վայրերի կամ կալանավորվածներին պահելու վայրերի վարչակազմի որոշումների ու գործողությունների առթիվ ներկայացված առաջարկությունները, դիմումները և բողոքները չեն կասեցնում այդ որոշումների և գործողությունների կատարումը:

Դատախազին, դատավորին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, փաստաբանին կամ պաշտպանին, ձերբակալվածներին պահելու վայրերի և կալանավորվածներին պահելու վայրերի նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններին հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքները կնքված փաթեթով մեկ օրվա ընթացքում ուղարկվում են հասցեատիրոջը:

Արգելվում է որևէ ձևով հետապնդումը ձերբակալված կամ կալանավորված անձանց նկատմամբ՝ իրենց իրավունքների և օրինական շահերի խախտումների վերաբերյալ առաջարկություններ, դիմումներ, բողոքներ ներկայացնելու դեպքում: Նման հետապնդում իրականացնող անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

(18-րդ հոդվածը լրաց. 08.07.05 ՀՕ-162-Ն, 21.12.15 ՀՕ-191-Ն, փոփ. 16.12.16 ՀՕ-3-Ն)

Հողված 19. Ձերբակալված և կալանավորված անձանց սնունդը, սննդամթերք և անհրաժեշտ առարկաներ ձեռք բերելը

Ձերբակալված կամ կալանավորված անձն ապահովվում է առողջության և ուժերի պահպանման համար բավարար անվճար սննդով, որի նվազագույն չափաբաժինները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Սննդի որակը և սննդարարությունը սահմանված նվազագույն չափաբաժիններից պակասեցնելը, այդ թվում՝ որպես տույժի միջոց, արգելվում է:

Ձերբակալված կամ կալանավորված հղի կանայք, կերակրող մայրերը, անչափահասները, ինչպես նաև ձերբակալված կամ կալանավորված հիվանդ անձինք ապահովվում են անվճար հատուկ սննդով, որի տեսականին և նվազագույն չափաբաժինները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ձերբակալված կամ կալանավորված անձը պետք է ապահովված լինի խմելու ջրով:

Ձերբակալված կամ կալանավորված անձն իր միջոցներով կարող է ձեռք բերել սնունդ և անհրաժեշտ ու չարգելված առարկաներ: Սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու կարգը սահմանվում է ներքին կանոնակարգով:

Ձերբակալված կամ կալանավորված անձի կողմից սննդի ընդունումից հրաժարվելու դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի պետք կամ նրան փոխարինող անձը պարտավոր է պարզել դրա պատճառները և այդ մասին հայտնել քրեական վարույթն իրականացնող, ինչպես նաև հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին:

Սննդի ընդունումից հրաժարվելու փաստը չի կասեցնում ձերբակալված կամ կալանավորված անձին այլ վայրեր տեղափոխելը և դատավարական գործողությունների մասնակցելը: Անհրաժեշտության դեպքում փոխադրումը կարող է իրականացվել բուժաշխատողի ուղեկցությամբ:

Հողված 20. Ձերբակալված և կալանավորված անձանց նյութակենցաղային պայմանների ապահովումը

Ձերբակալված և կալանավորված անձանց համար ստեղծվում են սանիտարահիգիենիկ և հրդեհային անվտանգության պահանջներին համապատասխանող նյութակենցաղային պայմաններ:

Ձերբակալված և կալանավորված անձանց հատկացված բնակելի տարածքը պետք է համապատասխանի ընդհանուր բնակելի տարածքների համար սահմանված շինարարական և սանիտարահիգիենիկ նորմերին: Ձերբակալված և կալանավորված անձանց հատկացված բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից՝ յուրաքանչյուր անձի համար:

Ձերբակալված և կալանավորված անձանց տրամադրում են անհատական քնելու տեղ և անկողնային պարագաներ:

Ձերբակալված և կալանավորված անձինք կրում են իրենց հագուստը: Անհրաժեշտության դեպքում նրանք ապահովվում են կլիմայական պայմաններին, սեռին համապատասխան միասնական նմուշի հագուստով:

(20-րդ հոդվածը փոփ. 08.07.05 ՀՕ-162-Ն)

Հողված 21. Ձերբակալված և կալանավորված անձանց բուժսանիտարական օգնությունը, անձնական հիգիենան

Ձերբակալված և կալանավորված անձանց բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտը կարգավորող օրենսդրությանը համապատասխան:

Ձերբակալված և կալանավորված անձանց բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ձերբակալվածներին պահելու վայրի և կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերն ապահովում են ձերբակալված կամ կալանավորված անձանց առողջության պահպանմանն ուղղված սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային պահանջների կատարումը:

Կալանավորվածներին պահելու վայրում պետք է աշխատի ընդհանուր մասնագիտացում ունեցող առնվազն մեկ բժիշկ:

Մասնագիտացված բուժօգնության կարիք ունեցող ձերբակալված կամ կալանավորված անձը փոխադրվում է հատուկ մասնագիտացված կամ քաղաքացիական բուժհաստատություն: Ձերբակալված և կալանավորված անձանց բժշկական, այդ թվում՝ հոգեբուժական օգնություն ցույց տալու, նրանց բուժհաստատություններում պահելու, ինչպես նաև բուժապասարկման գործում այդ հաստատությունների աշխատողներին ներգրավելու կարգը սահմանում է լիազորված մարմինը:

Ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում

ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի բուժաշխատողը կամ հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած բժիշկը: Բժշկական զննությունը իրականացվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջվել՝ նաև տեսողության սահմաններից դուրս: Բուժզննության արդյունքները սահմանված կարգով գրանցվում են անձնական գործում, և այդ մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմինն:

Ձերբակալված կամ կալանավորված անձի ծանր հիվանդության կամ մահվան դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմն այդ մասին անհապաղ տեղեկացնում է ձերբակալված կամ կալանավորված անձի մերձավոր ազգականներին, քրեական վարույթն իրականացնող մարմնին և հսկողություն իրականացնող դատախազին:

Օտարերկրյա քաղաքացիություն ունեցող ձերբակալված կամ կալանավորված անձի ծանր հիվանդության կամ մահվան դեպքում համապատասխան հիմնարկի վարչակազմն այդ մասին անհապաղ հայտնում է վերադաս մարմնին, որն էլ տեղեկացնում է շահագրգիռ գերատեսչություններին, այդ թվում՝ համապատասխան պետության դիվանագիտական ներկայացուցչությանը կամ հյուպատոսական հիմնարկին:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված գործողությունները կատարելուց հետո աճյունը հանձնվում է այն պահանջող անձին՝ նախապատվությունը տալով մերձավոր ազգականներին: Եթե աճյունը երեք օրվա ընթացքում չի պահանջվել, հուղարկավորությունը կատարվում է պետության հաշվին:

Ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ ծանր հիվանդություն հայտնաբերելու դեպքում, որը կարող է հանգեցնել նրա հոգեկան խանգարման կամ մահվան, համապատասխան հիմնարկի պետը բժշկական եզրակացության հիման վրա միջնորդում է քրեական վարույթն իրականացնող մարմնին և հսկողություն իրականացնող դատախազին՝ հարկադրանքի միջոցը վերացնելու կամ փոխելու վերաբերյալ:

Ձերբակալված կամ կալանավորված անձը պետք է հնարավորություն ունենա մարդկային արժանապատվությունը չնվաստացնող պայմաններում բավարարել իր սանիտարահիգիենիկ պահանջները: Նրա անձնական հիգիենայի պահպանման պայմանները և կանոնները սահմանվում են ներքին կանոնակարգով:

Արգելվում է ձերբակալված կամ կալանավորված անձին ենթարկել որևէ բժշկական կամ գիտական փորձի՝ անկախ վերջինիս համաձայնության:

(21-րդ հոդվածը խմբ. 08.07.05 ՀՕ-162-Ն)

Հոդված 22. Ծանրոցներ, հանձնույթներ և դրամական փոխանցումներ ստանալը

Ձերբակալված անձն արգելանքի տակ գտնվելու ընթացքում կարող է ստանալ մինչև քսան կիլոգրամ հանձնույթ, իսկ կալանավորված անձը՝ ամսվա ընթացքում մինչև յոթանասուն կիլոգրամ: Նրանք սահմանված չափի հանձնույթները կարող են ստանալ միանվագ կամ մաս-մաս:

Կալանավորված անձանց անուում ստացված դրամը փոխանցվում է նրանց անձնական հաշվին: Նրանք իրենց միջոցներից կարող են դրամական փոխանցումներ կատարել ազգականների և այլ անձանց դրամական հաշվին:

Ձերբակալված անձանց անուում դրամական փոխանցումներ կատարելն արգելվում է:

Բժշկի եզրակացությամբ դեղորայքի կարիք ունեցող ձերբակալված կամ կալանավորված անձանց անուում ստացվող դեղորայքի քանակը չի սահմանափակվում: Արգելվում է ձերբակալված կամ կալանավորված անձին փոխանցել այնպիսի նյութեր, առարկաներ, որոնք մարդկանց առողջությանը վտանգ են սպառնում կամ կարող են խոչընդոտել արգելանքի և կալանքի տակ պահելու խնդիրների իրականացմանը:

Ձերբակալված կամ կալանավորված անձին արգելված առարկաներ, նյութեր փոխանցելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

Հոդված 23. Կալանավորված անձանց լրացուցիչ վճարովի ծառայություններով ապահովելը

Համապատասխան պայմանների առկայության դեպքում կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը կալանավորված անձանց ապահովում է բժշկական, հիգիենիկ և կենցաղային լրացուցիչ վճարովի ծառայություններով:

Կենցաղային լրացուցիչ վճարովի ծառայությունների ցանկը և դրանց ապահովման կարգը սահմանվում են ներքին կանոնակարգով:

Հոդված 24. Կալանավորված անձանց աշխատանքը

Կալանավորված անձը, հնարավորության դեպքում, կամավոր ապահովվում է աշխատանքով, կամ նրան իրավունք է վերապահվում ինքնուրույն զբաղվել աշխատանքով, որի կարգը և պայմանները սահմանվում են ներքին կանոնակարգով:

Կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը, կալանավորված անձին աշխատանքի ներգրավելիս, պարտավոր է հաշվի առնել նրա սեռը, տարիքը, աշխատունակությունը, առողջական վիճակը և հնարավորինս՝ մասնագիտությունը: Կալանավորված անձն աշխատանքի է ներգրավվում խցային պայմաններում:

Կալանավորված անձի աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:

Կալանավորված անձի կատարած աշխատանքից ստացված եկամուտը, օրենքով նախատեսված պահումները կատարելուց հետո, փոխանցվում է նրա անձնական հաշվին:

Արգելվում է կալանավորված անձանց ներգրավել չվարձատրվող աշխատանքների, բացառությամբ սանիտարահիգիենիկ աշխատանքների:

Կալանավորված անձանց արգելված աշխատանքների և պաշտոնների ցանկը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Հոդված 25. Մշակութային, կրոնական, լուսավորչական, կրթական միջոցառումները կալանավորվածներին պահելու վայրերում և ձերբակալվածներին պահելու վայրերում

Կալանավորվածներին պահելու վայրերում ստեղծվում են պայմաններ՝ կալանավորված անձանց կողմից իրենց ազատ ժամանակը համապատասխան ձևով տնօրինելու համար: Այդ նպատակով ստեղծվում են նաև գրադարաններ:

Կալանավորվածներին պահելու վայրեր կարող են հրավիրվել հոգևորականներ, այդ վայրերում կարող են կազմակերպվել կրոնական ծիսակատարություններ: Կալանավորված անձինք կարող են օգտվել պաշտամունքի առարկաներից և հոգևոր գրականությունից:

Կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը հնարավորություններ է ստեղծում կալանավորված անձանց տարրական, հեռակա ընդհանուր միջնակարգ և բարձրագույն կրթությունը կազմակերպելու համար՝ պահպանելով ներքին կանոնակարգի պահանջները:

Ձերբակալվածներին պահելու վայրերում մշակութային, կրոնական, լուսավորչական, կրթական միջոցառումներ չեն իրականացվում:

Հոդված 26. Ձերբակալված և կալանավորված անձանց մասնակցությունը քաղաքացիաիրավական գործարքներին

Կալանավորված անձինք իրավունք ունեն, ներքին կանոնակարգով սահմանված կարգով, իրենց ներկայացուցիչների միջոցով կամ անձամբ մասնակցել քաղաքացիաիրավական գործարքների, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

Քրեական վարույթն իրականացնող մարմինը, քննության շահերից ելնելով, կալանավորված անձանց կարող է արգելել քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելը:

Կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը նախօրոք պետք է քրեական վարույթն իրականացնող մարմնին տեղեկացնի կալանավորված անձանց քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելու վերաբերյալ:

Ձերբակալված անձանց արգելվում է մասնակցել քաղաքացիաիրավական գործարքներին:

Հոդված 27. Կանանց և անչափահասներին արգելանքի կամ կալանքի տակ պահելու առանձնահատկությունները

Ձերբակալված կամ կալանավորված կանանց և անչափահասների համար ձերբակալվածներին պահելու վայրերում և կալանավորվածներին պահելու վայրերում ստեղծվում են բարելավված նյութակենցաղային պայմաններ:

Ձերբակալված կամ կալանավորված կանայք և անչափահասներն օգտվում են ամենօրյա՝ երկու ժամից ոչ պակաս տևողությամբ զբոսանքի իրավունքից, որի ընթացքում հնարավորություն է տրվում զբաղվել մարմնամարզությամբ:

Կալանավորված կանայք իրավունք ունեն կալանքի տակ գտնվելու ընթացքում իրենց մոտ պահել մինչև երեք տարեկան իրենց երեխաներին:

Հղի կամ իրենց մոտ երեխա ունեցող ձերբակալված կամ կալանավորված կանանց համար ստեղծվում են համապատասխան նյութակենցաղային պայմաններ, կազմակերպվում է մասնագիտացված բուժսպասարկում:

Հղի կամ իրենց մոտ երեխա ունեցող կանանց, որպես տույժի միջոց, պատժախույժ տեղափոխվել արգելվում է:

Հիվանդության, ծնողական պարտականությունները բարեխղճորեն չկատարելու, երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունք դրսևորելու, ինչպես նաև ներքին կանոնակարգի խախտումներ թույլ տալու դեպքերում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը կարող է միջնորդություն ներկայացնել դատարան՝ կալանավորված անձին ծնողական իրավունքներից զրկելու և (կամ) երեխային այլ անձանց խնամքին հանձնելու մասին:

(27-րդ հոդվածը փոփ. 08.07.05 ՀՕ-162-Ն)

Հողված 28. Ձերբակալված և կալանավորված անձանց նյութական պատասխանատվությունը

Ձերբակալված և կալանավորված անձինք արգելանքի կամ կալանքի տակ գտնվելու ընթացքում պետությանը, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց պատճառած նյութական վնասի համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ձերբակալված և կալանավորված անձինք հատուցում են ձերբակալվածներին պահելու վայրին կամ կալանավորվածներին պահելու վայրին հասցված վնասը, ինչպես նաև իրենց փախուստի կամ իրենց առողջությանը դիտավորությամբ պատճառած վնասի բուժման համար կատարված ծախսերը:

Նյութական վնասը կամավոր հատուցելուց հրաժարվելու դեպքում վնասը գանձվում է դատական կարգով:

Ձերբակալված կամ կալանավորված անձին դատարանի դատավճռով նշանակված պատիժը կրելու համար ուղղիչ հիմնարկ ուղարկելու դեպքում չհատուցված նյութական վնասը գանձում է տվյալ ուղղիչ հիմնարկի վարչակազմը՝ դատապարտյալի անձնական հաշվին փոխանցվող միջոցներից:

Ձերբակալված անձին արգելանքից կամ կալանավորված անձին կալանքից ազատելու դեպքում նրանց կողմից չհատուցված նյութական վնասը գանձվում է դատական կարգով:

Ձերբակալված անձին ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորված անձին կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի կողմից հասցված վնասը հատուցվում է օրենքով սահմանված կարգով:

Գ Լ ՈՒ Խ 4.

ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՄԸ, ՄԵԿՈՒՍԱՅՈՒՄԸ ԵՎ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ: ԻՐԱՎԱԽԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԿԱԼՔԱՐԳԵԼՈՒՄԸ

Հողված 29. Ձերբակալված անձին ձերբակալվածներին պահելու վայր և կալանավորված անձին կալանավորվածներին պահելու վայր ընդունելը

Ձերբակալված անձին ձերբակալվածներին պահելու վայր, իսկ կալանավորված անձին կալանավորվածներին պահելու վայր ընդունում է տվյալ հիմնարկի վարչակազմը՝ ներքին կանոնակարգով սահմանված կարգով:

Կալանավորվածներին պահելու վայր փոխադրված անձը բժշկական գնտություն անցնելու և կալանավորվածներին պահելու վայրի պայմաններին ծանոթանալու նպատակով մինչև յոթ օր ժամկետով տեղավորվում է կարանտինային բաժանմունքում, որտեղ նա գտնվում է կալանքի տակ պահելու համար սահմանված պայմաններում: Կարանտինային բաժանմունքում կալանավորված անձին պահելու կարգը սահմանվում է ներքին կանոնակարգով:

Կալանավորվածներին պահելու վայր փոխադրված կալանավորված անձը կարանտինային բաժանմունքում տեղավորվելուց անմիջապես հետո տեղեկացվում է իր իրավունքներին և պարտականություններին, ներքին կանոնակարգին. այդ մասին տեղեկանքը կցվում է նրա անձնական գործին:

Ձերբակալված անձը ձերբակալվածներին պահելու վայր, իսկ կալանավորված անձը կալանավորվածներին պահելու վայր փոխադրվելուց անմիջապես հետո գրանցվում է դրա համար նախատեսված գրանցամատյաններում և անհատական քարտերում: Ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր անձի համար վարվում է անձնական գործ, որում պարտադիր կարգով պետք է ներառվեն ընդունելու և արգելանքից կամ կալանքից ազատելու տարեթվերն ու ամսաթվերը:

Հողված 30. Քննչական գործողություններին և դատական նիստերին ձերբակալված կամ կալանավորված անձի մասնակցությունն ապահովելը

Ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը, քննիչի, հետաքննություն կատարող անձի, դատախազի, դատարանի (դատավորի) ցուցումով, ապահովում է՝

1) ձերբակալված կամ կալանավորված անձանց ընդունելը և այլ վայրեր փոխադրելու համար պահակախմբին հանձնելը.

2) քննչական գործողությունները, ինչպես նաև ամբուլատոր դատահոգեբուժական և այլ փորձաքննություններ անցկացնելու համար ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի տարածքում համապատասխան տարածքներ կամ շինություններ տրամադրելը:

Ձերբակալված կամ կալանավորված անձանց քննչական գործողություններից կամ դատական նիստերից ազատելն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հողված 31. Ձերբակալված անձանց ձերբակալվածներին պահելու վայրերում և կալանավորված անձանց կալանավորվածներին պահելու վայրերում անջատ պահելը

Ձերբակալված անձինք ձերբակալվածներին պահելու վայրերում պահվում են անջատ՝ մենախցերում:
Կալանավորված անձինք կալանավորվածներին պահելու վայրերում պահվում են անջատ՝

- 1) տղամարդիկ՝ կանանցից.
 - 2) անչափահասները՝ չափահասներից.
 - 3) առաջին անգամ կալանավորված անձինք՝ նախկինում ազատագրված և ձերբակալված անձանցից.
 - 4) վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում կալանավորված անձինք՝ մյուսներից.
 - 5) դատարանների, իրավապահ, մաքսային և հարկային մարմինների աշխատող կամ նախկին աշխատող, ինչպես նաև ոստիկանության գործերի զինծառայող կամ նախկին զինծառայող կալանավորված անձինք՝ մյուսներից.
 - 6) շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություններով տառապող անձինք՝ մյուսներից.
 - 7) դատապարտյալները և ձերբակալված անձինք՝ մյուսներից, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք փոխադարձ համաձայնությամբ մասնակցում են նույն հիմնարկում իրենց համար կազմակերպված միջոցառումներին.
 - 8) միևնույն քրեական գործով անցնող կալանավորված անձինք՝ միմյանցից, քրեական վարույթն իրականացնող մարմնի գրավոր ցուցումի հիման վրա.
 - 9) այլ կալանավորված անձինք, որոնց կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում, մյուսներից՝ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի գրավոր որոշմամբ.
 - 10) անզգուշությամբ կատարված հանցանքի մեջ մեղադրվող անձինք՝ դիտավորությամբ կատարված հանցանքի մեջ մեղադրվող անձանցից.
 - 11) օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ մյուսներից:
- Քրեական վարույթն իրականացնող մարմինը կալանավորված անձանց անջատ պահելու նպատակով կարող է ներկայացնել այլ պատճառաբանված հիմքեր:
- Սույն հոդվածի երկրորդ մասում նախատեսված մեկուսացման հիմնական պահանջները պահպանվում են նաև ձերբակալված և կալանավորված անձանց փոխադրման ընթացքում:
- (31-րդ հոդվածը փոփ. 14.12.04 ՀՕ-3-Ն, 08.04.08 ՀՕ-10-Ն)*

Հոդված 32. Ձերբակալվածներին պահելու վայրում և կալանավորվածներին պահելու վայրում գտնվելու մասին հայտները

(վերնագիրը խմբ. 15.11.06 ՀՕ-177-Ն)

Յուրաքանչյուր ձերբակալված անձ ձերբակալվածներին պահելու վայրում և յուրաքանչյուր կալանավորված անձ կալանավորվածներին պահելու վայրում իրավունք ունեն այդ մասին կապի հնարավոր միջոցով անհապաղ տեղեկացնելու իր ընտրած անձին:

Ձերբակալվածներին պահելու վայրի վարչակազմը պարտավոր է ձերբակալված անձի՝ ձերբակալվածներին պահելու վայր ընդունվելու կամ մեկ հիմնարկից մյուսը փոխադրվելու մասին անհապաղ տեղյակ պահել ձերբակալված անձի ընտրած անձին, եթե հնարավոր չի եղել ձերբակալված անձի կողմից սույն հոդվածի առաջին մասով նախատեսված իրավունքից օգտվելը:

Կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը պարտավոր է կալանավորված անձի՝ կալանավորվածներին պահելու վայր ընդունվելու կամ մեկ հիմնարկից մյուսը փոխադրվելու մասին ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում գրավոր տեղյակ պահել կալանավորված անձի ընտրած անձին, եթե հնարավոր չի եղել կալանավորված անձի կողմից սույն հոդվածի առաջին մասով նախատեսված իրավունքից օգտվելը:

(32-րդ հոդվածը խմբ. 15.11.06 ՀՕ-177-Ն)

Հոդված 33. Ձերբակալված և կալանավորված անձանց նկատմամբ հսկողությունը

Ձերբակալված անձինք ձերբակալվածներին պահելու վայրերում և կալանավորված անձինք կալանավորվածներին պահելու վայրերում գտնվում են մշտական հսկողության ներքո: Հսկողության իրականացման նպատակով կարող են օգտագործվել տեխնիկական և էլեկտրոնային միջոցներ:

Ձերբակալված և կալանավորված անձինք ենթարկվում են անձնական խուզարկության՝ նույն սեռին պատկանող անձանց կողմից, մասնադրոշման և լուսանկարման: Խուզարկությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ձերբակալված կամ կալանավորված անձանց հանձնած դրամը փոխանցվում է նրանց անձնական հաշվին, իսկ փաստաթղթերը տրվում են պահպանության: Ձերբակալված կամ կալանավորված անձանցից առգրավված իրերը, առարկաները, նյութերը տրվում են պահպանության կամ ներքին կանոնակարգով նախատեսված դեպքերում ոչնչացվում են՝ ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի պետի պատճառաբանված որոշմամբ, ինչի մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:

Հոդված 34.

Կալանավորված անձանց նկատմամբ կիրառվող խրախուսանքի միջոցները և դրանք կիրառելու կարգը

Օրինապահ վարքագծի համար կալանավորված անձի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ միջոցները.

- 1) շնորհակալության հայտնում.
- 2) գրոսանքի տևողության ավելացում մինչև երեք ժամ` մինչև քսան օր ժամկետով.
- 3) նախկինում նշանակված տույժի վաղաժամկետ հանում.
- 4) կիրառվող տույժի վաղաժամկետ դադարեցում:

Սույն հոդվածով սահմանված խրախուսանքի միջոցներից բացի, ներքին կանոնակարգով կարող են սահմանվել խրախուսանքի այլ միջոցներ ևս:

Սույն հոդվածով սահմանված խրախուսանքի միջոցները կիրառվում են կալանավորվածներին պահելու վայրի պետի որոշմամբ:

Հոդված 35.

Կալանավորված անձանց նկատմամբ կիրառվող տույժի միջոցները և դրանք կիրառելու կարգը

Ներքին կանոնակարգը խախտելու, իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար կալանավորված անձի նկատմամբ կարող են կիրառվել տույժի հետևյալ միջոցները.

- 1) նկատողության հայտարարում.
- 2) պատժախուց տեղափոխելը մինչև տասն օր, իսկ անչափահասներին` մինչև հինգ օր ժամկետով:

Սույն հոդվածով սահմանված տույժի միջոցները կիրառվում են կալանավորվածներին պահելու վայրի պետի որոշմամբ:

Կալանավորված անձի նկատմամբ տույժի միջոցներ կիրառելիս հաշվի են առնվում խախտումը կատարելու հանգամանքները, նրա անձը և վարքը` մինչև խախտումը կատարելը: Կիրառվող տույժի միջոցը պետք է համապատասխանի կատարված խախտման ծանրությանը և բնույթին: Տույժի միջոցը կիրառվում է բացառապես խախտումը կատարած անձի նկատմամբ` խախտումը հայտնաբերելուց հետո անհապաղ կամ ոչ ուշ, քան տասն օրվա ընթացքում: Մեկ խախտման համար արգելվում է մեկից ավելի տույժի միջոցներ նշանակելը: Տույժի միջոցները կիրառելիս նշվում են կարգապահական խախտում հանդիսացող արարքը, տույժի միջոցը և դրա տևողությունը. այդ մասին տեղեկացվում է կալանավորված անձը:

Մինչև տույժի միջոց նշանակելը կալանավորված անձից վերցվում է գրավոր բացատրություն, իսկ եթե նա դրանից հրաժարվում է, ապա այդ մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:

Պատժախցից բուժկանխարգելիչ հաստատություններ տեղափոխված կալանավորված անձին նշված բուժհաստատությունում պահելու ժամանակը հաշվվում է տույժի կրման ժամանակի մեջ:

Կալանավորված անձի նկատմամբ տույժի միջոցի կիրառումը կարող է բողոքարկվել կալանավորվածներին պահելու վայրերի նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին: Բողոքարկումը տույժի միջոցի կիրառումը չի կասեցնում:

Հոդված 36.

Պատժախցում կալանավորված անձանց պահելու առանձնահատկությունները

Կալանավորված անձինք պատժախցում պահվում են միայնակ:

Կալանավորված անձինք տեղափոխվում են պատժախուց` այդ նպատակով նախատեսված գրանցամատյաններում պարտադիր նշելով պատժախցում պահելու ժամկետը:

Պատժախցում գտնվելու ընթացքում կալանավորված անձինք անկողնային պարագաներով ապահովվում են քնի համար սահմանված ժամերին:

Պատժախցում գտնվելու ընթացքում կալանավորված անձանց արգելվում են նամակագրությունը, տեսակցությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի և փաստաբանի կամ պաշտպանի հետ տեսակցությունների, լրացուցիչ սննդամթերք, առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելը, ծանրոցներ, հանձնուքներ ստանալը, դրամական փոխանցումներ կատարելն ու ստանալը, հեռուստադիտումները, սեղանի խաղերից օգտվելը:

Պատժախցում պահվող կալանավորված անձինք օգտվում են ամենօրյա` առնվազն մեկ ժամ տևողությամբ գրոսանքի իրավունքից:

Կալանավորված անձանց կողմից առաջարկություններ, դիմումներ և բողոքներ ներկայացնելն իրականացվում է

սույն օրենքի 18-րդ հոդվածով սահմանված կարգով:

Պատժախցում պահվող կալանավորված անձինք գտնվում են բժշկական հսկողության ներքո:

Կալանավորվածներին պահելու վայրի պետն իրավունք ունի հետազգել պատժախուց տեղափոխելու ձևով տույժի կիրառումը, կրճատել տույժի ժամկետը կամ վաղաժամկետ ազատել տույժի կրումից՝ բժշկական եզրակացության հիման վրա կամ այլ հիմքով: Եթե հետազգված ժամանակամիջոցում կալանավորված անձը նոր խախտում չի գործել, նա կարող է ազատվել տույժի կրումից:

Պատժախցում պահվող կալանավորված անձանց նկատմամբ սույն հոդվածով չնախատեսված սահմանափակումներ կիրառելն արգելվում է:

(36-րդ հոդվածը լրաց. 08.04.08 ՀՕ-16-Ն, 21.12.15 ՀՕ-191-Ն)

Գ Լ ՈՒ Խ 5.

ՁԵՐԲԱԿԱԼ ՎԱՍՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՖԻԳԻԿԱԿԱՆ ՈՒԺ, ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՀՐԱՁԵՆ ԳՈՐԾԱԴՐԵԼԸ

Հոդված 37. Ձերբակալվածներին պահելու վայրում և կալանավորվածներին պահելու վայրում ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելը

(վերնագիրը խմբ. 08.07.05 ՀՕ-162-Ն)

Ձերբակալվածներին պահելու վայրի և կալանավորվածներին պահելու վայրի ծառայողների կամ կարգուկանոն հաստատելուն ներգրավված այլ անձանց կողմից ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելը թույլատրվում է միայն օրենքով սահմանված հիմքերով և դեպքերում:

(37-րդ հոդվածը խմբ. 08.07.05 ՀՕ-162-Ն)

Հոդված 38. Ձերբակալվածներին պահելու վայրերում և կալանավորվածներին պահելու վայրերում ֆիզիկական ուժ գործադրելը

(հոդվածն ուժը կորցրել է 08.07.05 ՀՕ-162-Ն)

Հոդված 39. Ձերբակալվածներին պահելու վայրերում և կալանավորվածներին պահելու վայրերում հատուկ միջոցներ գործադրելը

(հոդվածն ուժը կորցրել է 08.07.05 ՀՕ-162-Ն)

Հոդված 40. Ձերբակալվածներին պահելու վայրերում և կալանավորվածներին պահելու վայրերում հրազեն գործադրելը

(հոդվածն ուժը կորցրել է 08.07.05 ՀՕ-162-Ն)

Գ Լ ՈՒ Խ 6.

ԱՐԳԵԼԱՆՔԻՑ ԵՎ ԿԱԼԱՆՔԻՑ ԱԶՍԵԼԸ

Հոդված 41. Ձերբակալված անձանց արգելանքից և կալանավորված անձանց կալանքից ազատելու հիմքերը

Ձերբակալված անձինք արգելանքից և կալանավորված անձինք կալանքից ենթակա են ազատման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով:

Հոդված 42. Ձերբակալված անձանց արգելանքից և կալանավորված անձանց կալանքից ազատելու կարգը

Ձերբակալված անձանց արգելանքից անհապաղ ազատում է ձերբակալվածներին պահելու վայրի պետը՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կամ հետաքննության մարմնի որոշման հիման վրա, կամ երբ լրացել է ձերբակալման՝ օրենքով սահմանված առավելագույն ժամկետը:

Կալանավորված անձանց կալանքից անհապաղ ազատում է կալանավորվածներին պահելու վայրի պետը՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա:

Օրենքով նախատեսված դեպքերում կալանավորված անձանց կալանքից ազատելու որոշում կարող է ընդունել նաև կալանավորվածներին պահելու վայրի պետը:

Ձերբակալվածներին պահելու վայրի վարչակազմը ձերբակալված անձին արգելանքից կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը կալանավորված անձին կալանքից ազատելիս կատարում է համապատասխան գրանցում դրա համար նախատեսված գրանցամատյաններում և անհատական քարտերում:

Արգելանքից ազատվող ձերբակալված անձին կամ կալանքից ազատվող կալանավորված անձին վերադարձվում են նրա անձնական փաստաթղթերը, իրերը, անձնական հաշվում եղած դրամը, ինչպես նաև տրվում է տեղեկանք, որում նշվում են ձերբակալվածներին պահելու վայրում կամ կալանավորվածներին պահելու վայրում գտնվելու ժամկետը, տարեթվերը, ամսաթվերը և արգելանքից կամ կալանքից ազատվելու հիմքերը:

Հոդված 43. Օգնությունը ձերբակալված անձանց արգելանքից և կալանավորված անձանց կալանքից ազատելիս

Ձերբակալված անձինք արգելանքից և կալանավորված անձինք կալանքից ազատվելիս ապահովվում են մինչև իրենց բնակության վայրն անվճար ուղևորությամբ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում, դրա ընթացքում անհրաժեշտ սննդամթերքով, իսկ միջոցների բացակայության դեպքում՝ սեզոնային անհրաժեշտ հագուստով: Նրանց կարող է տրամադրվել նաև միանվագ դրամական նպաստ:

Սննդամթերքով, հագուստով ապահովումը, միանվագ դրամական նպաստի տրամադրումը, ինչպես նաև արգելանքից կամ կալանքից ազատվող անձանց ուղևորության վճարումը կատարում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը:

Առողջական վիճակի պատճառով խնամքի կարիք ունեցող անձանց, հղի կամ մանկահասակ երեխաներ ունեցող կանանց, ինչպես նաև անչափահասներին արգելանքից կամ կալանքից ազատելիս ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմն ազատման մասին նախօրոք հայտնում է նրանց մերձավոր ազգականներին կամ այլ անձանց: Մերձավոր ազգականներ չունենալու դեպքում անհրաժեշտ օգնությունը ցույց է տալիս տվյալ հիմնարկի վարչակազմը:

Սույն հոդվածի երրորդ մասում թվարկված անձինք բնակության վայր են ուղարկվում մերձավոր ազգականների, կամ այլ անձանց կամ տվյալ հիմնարկի աշխատակցի ուղեկցությամբ:

Գ Լ ՈՒ Խ 7.

ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԿԱՆ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ

Հոդված 44. Դատական վերահսկողությունը

Կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը դատարանին հայտնում է կալանավորված անձի՝ կալանքի տակ գտնվելու, դրա ժամկետների, ինչպես նաև կալանավորված անձին կալանքից ազատելու մասին:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով դատարանը քննարկում է ձերբակալված և կալանավորված անձանց բողոքները՝ ձերբակալվածներին պահելու վայրերի և կալանավորվածներին պահելու վայրերի վարչակազմերի գործողությունների դեմ:

Հոդված 45. Գերատեսչական վերահսկողությունը

Ձերբակալվածներին պահելու վայրերի և կալանավորվածներին պահելու վայրերի գործունեության նկատմամբ վերադաս մարմինները և դրանց պաշտոնատար անձինք իրականացնում են գերատեսչական վերահսկողություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

(45-րդ հոդվածը փոփ. 08.07.05 ՀՕ-162-Ն)

Հոդված 46. Դատախազական հսկողությունը

Ձերբակալվածներին պահելու վայրերում և կալանավորվածներին պահելու վայրերում օրենքների պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և նրան ենթակա դատախազները՝ «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 47. Հասարակական վերահսկողությունը

Ձերբակալվածներին պահելու վայրերի և կալանավորվածներին պահելու վայրերի գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողությունն իրականացվում է լիազորված համապատասխան մարմնի ղեկավարի կազմավորած հասարակական դիտորդների խմբի միջոցով:

Ձերբակալվածներին պահելու վայրերի և կալանավորվածներին պահելու վայրերի նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացման կարգը, ինչպես նաև հասարակական դիտորդների խմբի կազմը և իրավասությունը սահմանում է լիազորված համապատասխան մարմնի ղեկավարը:

Հասարակական դիտորդների խմբի անդամների թիվը չի կարող գերազանցել քսանմեկը: Հասարակական դիտորդների խմբի անդամի լիազորությունները երեք տարի են:

(47-րդ հոդվածը լրաց. 08.07.05 ՀՕ-162-Ն)

Հոդված 48. Մուտքն ու ելքը ձերբակալվածներին պահելու վայր և կալանավորվածներին պահելու վայր

(վերնագիրը խմբ. 08.07.05 ՀՕ-162-Ն)

Ձերբակալվածներին պահելու վայր և կալանավորվածներին պահելու վայր մուտքի և ելքի կարգը սահմանում է պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարը:

Առանց հատուկ թույլտվության ձերբակալվածներին պահելու վայր և կալանավորվածներին պահելու վայր անարգել մուտքի և ելքի իրավունք ունեն

1) Հայաստանի Հանրապետության Նախագահը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահը, Հայաստանի Հանրապետության վարչապետը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահը, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորը, պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարը կամ նրա համապատասխան տեղակալը.

2) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը, նրա տեղակալները, ինչպես նաև այն դատախազները, ովքեր օրենքով սահմանված կարգով հսկողություն են իրականացնում պատիժներ և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու նկատմամբ.

3) ձերբակալվածներին պահելու վայրի և կալանավորվածներին պահելու վայրի վերադաս մարմինների պաշտոնատար անձինք.

4) միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա.

5) Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավասու պետական ծառայողները և հայեցողական պաշտոն զբաղեցնող իրավասու անձինք, ինչպես նաև կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետները.

6) Հայաստանի Հանրապետության այն դատավորները, ովքեր օրենքով սահմանված կարգով քննում են կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու կամ կալանքի տակ պահելու օրինականության հետ կապված հարցերը, ձերբակալված և կալանավորված անձանց իրավունքների և ազատությունների խախտման, ինչպես նաև ձերբակալվածներին պահելու վայրի և կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերի այլ գործողությունների դեմ բողոքները.

7) սույն օրենքի 47-րդ հոդվածով սահմանված արգելանքի և կալանքի տակ պահելու կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդները:

Օրենքով նախատեսված դեպքերում առանց հատուկ թույլտվության ձերբակալվածներին պահելու վայր և կալանավորվածներին պահելու վայր անարգել մուտքի և ելքի իրավունք կարող է տրվել նաև այլ անձանց:

Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց կողմից ձերբակալված և կալանավորված անձանց հետ տեսակցությունները չեն ազդում սույն օրենքով սահմանված՝ ձերբակալված և կալանավորված անձանց տրամադրվող տեսակցությունների քանակի վրա:

Ձերբակալվածներին պահելու վայր և կալանավորվածներին պահելու վայր մուտք և ելք գործող անձը, ինչպես նաև նրա իրերը ձերբակալվածներին պահելու վայրի և կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերի կողմից կարող են ենթարկվել գննության:

(48-րդ հոդվածը խմբ. 08.07.05 ՀՕ-162-Ն, լրաց. 08.04.08 ՀՕ-16-Ն, խմբ. 16.12.16 ՀՕ-3-Ն)

Գ Լ ՈՒ Խ 8.

ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 49. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետությունում նախնական կալանքի վերցնելու կանոնադրությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

**Հայաստանի Հանրապետության
Նախագահ**

Ռ. Քոչարյան

Երևան
7 մարտի 2002 թ.
ՀՕ-305